

ՀԵՌՊԳԻՐ ՈՒՂՂՈՒՍԾ ՎԱՐՉԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ԳԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԱՏԵԱՆԻ ՎՃԻՌՆԵՐՈՒ

ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԱՂԵՐՍԵՆՈՒ ՀԱՄԱՐ

Թուական 7 Յունիս 1325 (1909)

Կը խնդրուի Ձեր վսեմութենէն որ բարեհաճի յե-
տածգել սյատերազմական ասեանի վճիռներուն դոր-
ձադրութիւնը՝ մինչեւ որ մեր քննութիւնը աւարտի :
ՅԱԿՈՐ

ԶՈՇԵՐՈՒ ԹԻՒԸ

Ատանալի և իր շրջանակներուն մէջ սպաննուած
Հայերու թիւը մօտաւորապէս 21,000 հոգիի կը հասնի :

Այս թիւը կը բաժնուի հետեւեալ կերպով .

Ատանա և շրջակայ ազարակներու մէջ	9780
Թանրը-Վէրաի » » »	1280
Սայ-Կէչիտ	850
Էսէ Հաճիլի	1558
Օսմանիէ	1111
Պօստան-Չիֆթլիք	1277
Բուրտլար	3623

19,479

Յոյներ	250	
Սուրիացիներ (Սուրիանի)	850	
Քաղղէացիներ (Քիւտանի)	422	1522

Համազուամար

21,001

Թէպէտև Հայ, Հայ-Կաթողիկ, Բողոքական, Յոյն,
Սուրիացի և Քաղղէացի Առաջնորդարաններու տուած
թիւերը 21,000ի դուամորը կ'անցնին, սակայն մեր քնն-
նութիւնը հաստատեց այս վերջին թիւը :

Անկախաբար այս զոհերէն, զանազան իսլամ ազա-
րակներու մէջ սպաննուած են ուրիշ անձեր՝ սրանց թի-
ւը յայտնի չէ :